

հինն ու մեծն Արեւելքի մէջ իրենց համար ծախողներ , միջնորդներ , փոխադրողներ , փոխանակողներ , տեղեկատուներ եւն : Սակայն Արեւելքի մեր այդ ծախող հայ միջնորդները , զոր մենք լայնաբար վաճառական անուանել սովոր ենք , մանաւանդ անոնց մէջ ափ մը ջուջերուն մեծ մասը՝ չեն կրրցած թօթափել իրենց բնաւորութեան մէջէն այն կարգ մը տրմուղ և յետադէմ ունակութիւնները , որ խոտոր կը համեմատին թէ՛ իրենց իսկ բուն շահերուն , թէ՛ ազնիւ վաճառականութեան , թէ՛ անգղիական պատճառադէտ առեւտրական սկիզբներուն հետ : Ասոնցմէ շատերն՝ իրենց նոր մրցակիցներն ու արհեստակիցներն ընկճելու չէզոքացունելու մինչեւ անգամ փճացունելու գաղտնի վարժութեանց կողմէն աննմանաբար վարպետ՝ զուրկ էին ինչ և է շինիչ ու ամրացուցիչ կարողութենէ , ինչ և է երկնող տրամախոհող գաղափարէ՛ իրենց բաղմապէտ արհեստին ստոյգ պարտուցն և պիտոյից վրայ : Աշխատութեան կողմէն ալ՝ ծոյլ ըսուելու աստիճան յամբոնթաց և ծանրայարոյց՝ ճի՛շդ հաշուելու և ճի՛շդ ժամերուն իրենց գործին ու գործակատարաց գլուխն անցնելու պարտաճանաչութիւնը շատ թերի ու անգիտակից էր իրենց վրայ , կարգ մը սիրտի այն ազնիւ տրամադրութեանց հետ , որ ոգին և շունչն են ամէն գործի : Գո՛հ կը մնային կը բաւականանային ճենովական և յունական (մանաւանդ Սազըղցոց) վաղեմի վաճառականութեանց բուն Կ . Պոլիսի , Ղալադիայի , Ջիւղուայի հրապարակներուն վրայ թողած լքած վերջամիաց դիրտերէն և ընթացիկ վաճառագնացքէն , անփոյթ բոլորովին անոնք զարգացունելու նորոգելու բեղմնաւորելու և ըստ ժամակից ոգիին լաբելու հարկին :

Կ . Պոլիսի առաջին հայ վաճառականներուն կէսը ,